

# ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՔԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ\*

Նարինե Հարությունյան  
Երևանի պետական համալսարան

**Գ**աղթի արագընթաց հոսքի պայմաններում առավել կարևոր են դառնում խառնածին մշակույթի հատուկ շերտի՝ *բազմամշակութայնության* հարցերն ու խնդիրները՝ մասնավորապես *բազմամշակութային գրականության* մեջ:

Ժամանակակից լեզվաբանությունը այնպիսի հետազոտությունների կարիք ունի, որոնցում բազմամշակութային գիտակցության, խառնածին աշխարհայացքի, նոր հասարակության ձևավորման այն խնդիրները, որոնք իրենց դրսևորումն են գտնում բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսը ստեղծող հեղինակների յուրօրինակ լեզվական ոճում, կոդիտարկվեն լեզվամշակութաբանական լայն համատեքստի և միջգիտակարգային մոտեցման հենքի վրա:

Հոդվածը միտված է սահմանելու *բազմամշակութային գեղարվեստական դիսկուրս* տերմինի բացառիկությունը ու լեզվաբանների ուշադրությունը բևեռելու տվյալ դիսկուրսի և դրա չափանիշների վրա՝ օգտագործելով տարբեր մոտեցումներ՝ լեզվակենտրոն, տեքստակենտրոն, մարդակենտրոն, ճանաչողական և այլն:

**Բանալի բառեր.** բազմամշակութային, գեղարվեստական դիսկուրս, պոլինպետսի էֆեկտ, երկլեզվություն, մշակութային բազմահնչություն, ազգային ինքնություն:

## Ներածություն

Խնդրի հետազոտության տեսական նախապայմանը XX-րդ դարում սկիզբ առած աշխարհի գլոբալիզացման կամ արևմտամետության ընթացքն է, որը ծնեց մեծաքանակ մշակութային արտագաղթողներ: Սակայն XXI-րդ դարաշեմին գաղթի բնույթը կտրուկ փոխվեց, քանի որ արևմտամետությունը փոխարինվեց արևելամետությամբ և արևելքի ավանդական արժեքները ակտիվորեն հոսեցին արևմուտքի աշխարհ (Որոսա 2001:45-46): Ժամանակակից գլոբալիզացման ընթացքում ի սկզբանե դրված են մարդկանց միջև գոյություն ունեցող մշակութային տարածայնությունները, որոնք պայմանավորված են նրանց յուրօրինակ էթնոմշակույթով, պատմական և կրոնական արմատներով: Այսօրվա աշխարհը բազմամշակույթ է և բազմաբևեռ: Ջնջվում են սահմանները *յուրայինի* և *օտարի* միջև: Մշակույթների այս խառնուրդը դիտվում է ոչ միայն առանձին անհատների կյանքում, այլև դառնում մի ամբողջ մարդկային հասարակությանը բնորոշ գիծ:

Մշակութային բազմազանության կամ *բազմամշակութայնության* խնդիրը ներկայացնում է ժամանակակից աշխարհում ձևավորված քաղաքական, սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային պայմանների իրական դրամատիզմը և բարդությունը, որոնք միջռասայական, միջազգային, միջկրոնական բախումնե-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 24.10.2016:

րի և ահաբեկչության սպառնալիքների մեծ հավանականության պատճառով պահանջում են անմիջական լուծում:

Ու. Էկոն զուգահեռներ է անցկացնում ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գլոբալ գաղթի և միջնադարում տեղի ունեցած վիթխարի մշակութային խառնուրդի միջև: Նա նշում է, որ ժամանակակից Եվրոպայում ժողովրդի տեղաշարժը կարելի է համեմատել արևելքից արևմուտք վաղ հնդեվրոպական գաղթի կամ Հռոմեական կայսրության վրա վայրագների հարձակման հետ, որի արդյունքում ստեղծվեցին ռոմանագերմանական պետությունները: Հարյուր տարի անց, ըստ Ու.Էկոյի, Եվրոպան կդառնա գունավորների աշխարհամաս: *Դա ևս մեկ պատճառ է, որը մշակութային առումով մեզ ստիպում է պատրաստ լինել ընդունելու բազմազանությունը, տարբեր ժողովուրդների միախառնումը, ընդունելու այդ անկարգությունը,*— գրում է նա, — *եթե ոչ, մեզ սպասում է լիակատար անկում* (Chatterjee 2004:19-27):

### **Բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսի առանձնահատկությունները**

Բազմամշակութայնությունը, որը երկար տարիներ եղել է ԱՄՆ-ին բնորոշ գիծ, այսօր պրակտիկորեն տարածվել է բոլոր, հատկապես՝ եվրոպական երկրներում, որտեղ բազմաթիվ էթնիկ մշակույթների համատեղ գոյակցությունը ուղեկցվում է ոչ թե դրանց ծուլմամբ գերակայող մշակույթին, այլ պահպանվում է՝ ռասայական, մշակութային և կրոնական տարբերությունների համահավասարության ընդունմամբ:

Նոր սոցիալ-մշակութային դարաշրջանի մուտքով տեղի են ունենում փոփոխություններ ոչ միայն քաղաքականության, տնտեսության ասպարեզներում, այլ աշխարհայացքի, գրականության և լեզվի (մասնավորապես անգլերենի՝ որպես միջազգային լեզվի) մեջ: Լեզուն այս դեպքում անպայման դառնում է տրանսազգային մտածողության հիմքը: Սակայն նոր մշակութային արժեքներին և իրույթներին հարմարվելու ընթացքում լեզուն ոչ միայն հանդես է գալիս միջնորդի դերում՝ մշակույթների և կրոնների երկխոսության մեջ, այլև ինքը ենթարկվում է տարբեր փոխակերպումների:

Լեզվաբանության, փիլիսոփայության, հոգեբանության և ազգագրության սահմանագծին գտնվող բազմաթիվ միջգիտակարգային հետազոտություններում քննարկվում են ինքնության, հանդուրժողականության, միջմշակութային գրագիտության խնդիրները:

Ի հայտ են գալիս այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ *բազմամշակութային անհատ* կամ *միջմշակութային անհատ*, *բազմամշակութային կրթություն*, *բազմամշակութային գրականություն*: Մշակութային բազմաձայնությունը փոխադրողների դերում հանդես են գալիս բազմամշակութային գրականություն կերտողները՝ գրող-գաղթականները: Նրանց արվեստը անվանում են *mongrel literature* կամ *խառնածին գրականություն* (Ա.Պ. Գունեռատեն), *սահմանամերձ գրականություն* (Մ.Վ. Տլոստանովա), *անդրոգինների գրականություն* (Գ. Չխարտիշվիլի), *գաստարբայտների գրականություն*, *ներգաղթյալների գրականություն* (Կ. Խյուբներ):

Արդի կրոնների, մշակույթների և մտածելակերպերի բախումների պայմաններում, բարդ միջմշակութային և քաղաքակրթական բախումների ժամանա-

կաշրջանում, արտագաղթյալների գրականության ուսումնասիրությունը հատուկ արդիականություն և կարևորություն է ձեռք բերում: Ազգային ինքնության ճքնաժամ վերապրած հեղինակները իրենց զգացմունքներն ու ապրումները արտահայտում են իրենց իսկ գրական ստեղծագործություններում: Այս ստեղծագործությունների տեքստերը հասարակության նկատմամբ հեղինակների հայացքների յուրօրինակ արտացոլումն են՝ ինչպես *աութսայդերի* այնպես էլ *ինսայդերի* դիրքերից, ինչ նրանք և հանդիսանում են:

Նոր, բազմամշակութային աշխարհի իրականությունների հաստատման մեջ կարևոր դեր են խաղում այս գրող- գաղթյալները՝ որպես մարդիկ, որոնք այս կամ այն պատճառով կտրուկ փոխել են իրենց մշակութային շրջապատը և ստիպված են այդ նոր միջավայրում վերապրել ու իրենց ստեղծագործական գիտակցության միջով անցկացնել նոր միջավայրում տեղի ունեցող մշակութային հարմարակման հիվանդագին ընթացքի ախտանիշները, ինչի հետևանքով առաջանում են որոշակի յուրահատուկ նշաններ ունեցող ստեղծագործություններ, որոնք կարելի է միավորել մեկ ընդհանուր անվանումով՝ *միջմշակութային գրականություն* (Магачов 1997:19-27) :

Ելնելով Տ.Բ. Սամարսկու այն դրույթից, որ *գեղարվեստական դիսկուրսը իր վրա է կրում հասարակության պատմության մեջ մշակույթի որոշակի էտապի դրոշմը* (Rushdie 2006)՝ կարծում ենք, որ գլոբալիզացման, մշակույթների և ազգերի միախառնման դարաշրջանում տեղին կարելի է համարել *բազմամշակութային գեղարվեստական դիսկուրս* տերմինի ներմուծումը: Իրեն հատուկ հիմնական հատկանիշներով լինելով միջգիտակարգային՝ տվյալ դիսկուրսը գտնվում է սոցիալ-հոգեբանության, լեզվաբանության, մշակութաբանության, միջմշակութային հաղորդակցության մասնագետների հետաքրքրությունների կենտրոնում:

Բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսը միջմշակութային շփում է գրող-գաղթյալների ստեղծագործությունների շրջանակներում, որն իր մեջ միաձուլում է *մշակութային էկլեկտիկան* կամ խառնածինությունը: Հեղինակի էթնոմշակութային և տրանսմշակութային ինքնության փոխազդեցությունը և վեճը, նրա երկլեզվությունը, գաղափարական և հաճախ էլ կրոնական խառնածինությունը, արևելքի և արևմուտքի ավանդույթների միաձուլումը, սահմանում են տվյալ դիսկուրսի տեսակը:

Բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսը ծագում է երկու կամ ավելի մշակութային ավանդույթների հատման շրջանում:

*Յուրայինի* և *օտարի* մշտական ընդդիմության մեջ գտնվող երկլեզվակիր գրող-գաղթյալների արվեստը դառնում է բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսի ուսումնասիրման առարկա (Խ. Կուրյեշի, Ու. Սարոյան, Կ. Բողջալյան, Գ. Մարգարյան, Ս. Ռուշդի, Օ. Փամուկ, Բ. Օկրի): Դիսկուրսի տվյալ տիպը ներկայացնող տեքստերում հեղինակի անհատական ոճը հիմնվում է նրա էթնոմշակութային և կրոնական ինքնության սկզբնաղբյուրների վրա: Մի կողմից նրանք ընթերցողին հաղորդում են իրենց աշխարհաբաղաբալական էությունը, իսկ մյուս կողմից՝ իրենց ազգային պատկանելությունը, իրենց ժողովրդի պատմությունը և մշակույթը, սեփական ազգային աշխարհընկալումը՝ հանդես գալով որպես երկու մտածելակերպերի՝ *յուրայինի* ու *օտարի* մեկնաբան և միջնորդ:

Բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսի կարևորագույն հատկանիշն է հեղինակի՝ սեփական ազգային ինքնության սահմաններից դուրս գալը և

ներառվելը այն մշակույթի համատեքստ, որում ինքն ապրում և որի լեզվով էլ ա-  
րարում է իր ստեղծագործությունները:

Բնական է, որ հեղինակի բազմամշակութայնությունը արտահայտվում է միայն նրա աշխարհայացքի բազմամշակութայնության պայմաններում և խառ-  
նածինության ու իր սեփական մշակութային արժեքային համակարգի բացար-  
ձակ ընկալման, իր ազգային աշխարհապատկերի համատեքստում ներգրավ-  
ման, իր ազգամշակութային արձատներին դիմելու ընդունակության դեպքում:

Որպես օրինակ կարելի է բերել հայկական ծագում ունեցող ամերիկացի  
արձակագիր և դրամատուրգ, XX-րդ դարի ամենաճանաչված գրող Վ.Սարոյանի  
խոսքերը, որի անունը դասվում է այնպիսի գրողների շարքին, ինչպիսիք են՝ Է.  
Հեմինգուեյը, Ու. Ֆոլկները, Գ. Սթեյնբերգը, Գ. Ավդայքը:

*Չնայած ես գրում եմ անգլերեն և չնայած այն բանին, որ ծնունդով ամերի-  
կացի եմ, ինձ համարում են հայ գրող: Իմ կողմից օգտագործվող բառերը անգլե-  
րեն են, միջավայրը, որում ես գրում եմ, ամերիկյան է, սակայն այն հոգին, որը  
ստիպում է ինձ գրել, հայկական է: Նշանակում է ես հայ գրող եմ և խորապես  
հարգում եմ հայ գրողների ընտանիքին պատկանելու պատիվը (Самарская,  
Мартиросьян 2012):*

Բազմամշակութայնության տրանսմշակութային աշխարհընկալման մեկ այլ,  
ոչ պակաս պայծառ օրինակ է Վ. Վ. Նաբոկովը, որն այսպես է բնութագրում իր  
գոյատևումը երկու աշխարհների միջև. *Իմ նախնիների լեզուն մինչև այժմ էլ  
մնում է այն լեզուն, որտեղ ես ինձ ամբողջությամբ զգում եմ տանը: Բայց ես եր-  
բեք չեմ ասիտասալու իմ ամերիկյան կերպարանափոխությանը: Ես, ինքնին, հաս-  
կանալի է, պաշտում եմ ռուսերենը, սակայն անգլերենը գերազանցում է նրան  
հարմարավետության առումով՝ որպես աշխատանքային գործիք [...]: Իմ գլուխը  
անգլիական է, իսկ սիրտը՝ ռուսական (Discourse in Society, 2016):*

Բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսում տեղի է ունենում իր  
տեսակի մեջ մշակույթների երկխոսություն, միջմշակութային հաղորդակցության  
այնպիսի կարգերի/ կատեգորիաների միացում, միաձուլում, ինչպիսիք են՝ յու-  
րային և օտար, ազգակենտրոն և էթնոռեալիստիկ, օտարատիացություն և քսենո-  
ֆիլիա և այլն: Պատահական չէ, որ տվյալ դիսկուրսի կարևորագույն խնդիրնե-  
րից են ազգի գաղափարը, ազգային պատկանելիության զգացումը, ինքնության,  
ասիմիլիացիայի, հոգեբանական և մշակութային հայեցակետերի խնդիրները:

Միջմշակութային փոխներթափանցումը՝ որպես բազմամշակութային գրողի  
արվեստի խթանիչ, իր մեջ պարունակում է հեղինակի երկլեզվությունը, միջ-  
տեքստային երկխոսությունը, որոնք թույլ են տալիս օգտագործելու ինտեր-  
տեքստային հանրագիտարանը ինչպես տեքստային, այնպես էլ հիմնական գա-  
ղափարի մակարդակում:

Տվյալ դիսկուրսում դիտվում է բազմածին մշակութային տարրերի միաձու-  
լում, որի արդյունքում առաջանում է նոր, բազմամշակութային, գեղարվեստա-  
կան տարածություն, որն ունի միայն իրեն բնորոշ հատկանիշներ: Պահպանելով  
իր լեզուն և սեփական ազգային մշակույթի յուրահատկությունները՝ հեղինակը  
դրանք հարմարեցնում է իր երկրորդ մշակույթին, նոր խառնածին ինքնությանը,  
հետևաբար տեղի է ունենում երկու մշակույթների միահյուսում, երկու ազգային  
և լեզվական աշխարհապատկերների խաչաձևում:

Այսպիսով, բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսը գեղարվեստական տարածություն է, որում արտացոլվում է մարդու խառնածին բազմամշակութային ինքնությունը՝ մարդու, որը ստիպված է գոյատևել մշակույթների և կրոնների բազմաքանակության մթնոլորտում: Այս դիսկուրսը իր բնույթով տրանսազգային միջավայր է, որտեղ տեղի են ունենում ընդարձակված և իմաստներով հագեցած բանավեճեր՝ *բազմամշակութային հեղինակ - հասցեատեր - բազմամշակութային տեքստ* եռյակի տեսքով:

Համաձայն Տ. Վ. Դեյքի, *Դիսկուրսը ներկայացված է տարաբնույթ տեքստերում՝ ներկայացնելով այս կամ այն գաղափարախոսությունը*, իսկ Ս. Յու. Տյուրինան իր հեքթին նշում է, որ դիսկուրսը մեծամասամբ կախված է հետազոտողի գաղափարական կողմնորոշումից (տես Тюрин 2016): Հետևաբար, ելնելով դիսկուրսի և գաղափարախոսության սերտ կապերից, բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսը կարելի է սահմանել որպես լեզվական և մշակութային գործողություն, որը զարգանում է գեղարվեստական տեքստի շրջանակներում և ուղղված է որոշակի գաղափարախոսության՝ միջազգային, էթնիկական, գաղթյալներին: Վերջիններս ուրիշ մշակութային տարածության բացահայտման պրոցեսում ձևավորում են նոր ինքնություններ՝ սեփական գաղափարախոսությունը ենթարկելով փոփոխության: Այսպիսով, տվյալ դիսկուրսը հանդես է գալիս տեքստային տարածության դերում, որում տարվում է երկխոսություն բազմամշակութային հասարակության արժեքների նոր համակարգի մասին: Այդ համակարգի տարրերը ձևավորվում են արտագաղթի ու գլոբալիզացիայի պայմաններում և ուղեկցվում են *ազգայինի* և *ազգակենտրոնի* դերի կարևորության ինքնագիտակցմամբ: Հենց այդ պատճառով էլ բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսի հեղինակները, ցուցադրելով այլ մտածողություն և աշխարհընկալում, մեծ ազդեցություն են գործում հասարակական գիտակցության և նոր ինքնության ձևավորման ու կայացման վրա: Տվյալ դիսկուրսի սոցիալ-մշակութային բնութագրերի շարքում անհրաժեշտ է նշել դրա ազգամշակութային նշույթավորվածությունը և մետալեզուն, *արևմուտք - արևելք* խառնածինության հարացույցը և աստիճանը, այլ մշակույթի *օտար* մշակութային հարանշանակությունների և նշույթների ներթափանցումը և այլն:

Բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսի հետազոտությունը թույլ է տալիս նորովի դիտել մշակութային ինքնության ներկայացման խնդիրները: Տվյալ դիսկուրսի շրջանակներում ուսումնասիրվում են բազմամշակութային աշխարհընկալումը և դրան համապատասխան գեղարվեստական լեզուն, էթնոմշակութային իրակությունների, պատմական և գրական այլաբանությունների, խորհրդանիշների և ակնարկների, հասարակական, մշակութային և քաղաքական նախատիպերի, արևելքի և արևմուտքի միջուկգեներների, մեջբերումների և փոխառությունների առկայությունը, որոնք հեղինակի երկակի ինքնության արտահայտման կարևորագույն ձևերից են: Հետևաբար բազմամշակութային դիսկուրսը հարկավոր է դիտարկել ինչպես տեքստի, այնպես էլ այնպիսի տեսակետների հիման վրա ինչպիսիք են՝ դիսկուրսի լեզվաբանական կողմը, գաղափարախոսական, պատմական, մշակութային, հասարակական բաղադրիչները, դրա ներկայացման ոչ խոսքային միջոցները (դիմախաղ, ժեստ և այլն), սուբյեկտիվ հայեցակերպը, արժեքային բաղադրիչը և այլն: Այսպիսով, բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսը մշակութային բազմակարծության *ասպար*

րեզ է, այսինքն մի տեղ, ուր գոյակցում և արտահայտվում են տարբեր մշակութային ավանդույթներ, ժողովրդական, առասպելական սյուժեներ, արժեքներ, իդեալներ և կրոնական հավատալիքներ: Բազմամշակութային հեղինակների ազգային մտածելակերպը արտահայտվում է տարբեր գեղարվեստական միջոցներով: Մ.Կ. Պոպովայի կարծիքով *դիտվելով և վերլուծվելով որպես ամբողջություն՝ այդպիսի համակարգը անկասկած տալիս է օբյեկտիվ տեղեկություն հրականության նասին: Սակայն այդ օբյեկտիվության բացահայտման համար անհրաժեշտ է տիրապետել գրականագիտական և մշակութաբանական վերլուծության ժամանակակից մեթոդներին, որոնք հետազոտողին թույլ են տալիս կարդալու և ապակողակորելու ստեղծագործության մեջ թաքնված մշակութային գաղտնաբառերը* (Rushdie 1997:45-46):

Տվյալ դիսկուրսը ճանաչվում է իր միջմշակութային գրելաոճով, քանի որ դրան առաջին հերթին բնորոշ է խոսքի բազմահնչողությունը, մշակութային բազմաշերտությունը և ոճային խառնածինությունը:

### **Սալման Ռուշդիի բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսը**

Բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսը կառուցվում է արևմուտքի և արևելքի, Եվրոպայի և Ասիայի բազմախոսության հիման վրա: Այդ դիսկուրսը գեղարվեստական ստեղծագործությունների միաձուլում է, որոնք հանդես են գալիս որպես հեղինակի բազմամշակութային ավանդույթների համագործակցության արդյունք, մշակութային խճանկարի դրվագների հավաքածու, և ծնում են հեղինակի կողմից ներդրված իմաստների, կերպարների և զուգորդումների բազմազանություն, ինչպես նաև ընթերցողի կողմից արձագանքների, մեկնաբանումների, տեսիլքների և ընկալումների բազմազանություն: Հետևաբար տվյալ դիսկուրսում դիտվում է այսպես կոչված *պոլիմպետտի<sup>1</sup> էֆեկտ*: Տվյալ էֆեկտը մասնավորապես բնորոշ է ժամանակակից բրիտանական գրող Սալման Ռուշդիի ստեղծագործական արվեստին: Նրա արվեստի հիմքում դրված է արևելյան և արևմտյան մշակույթների բազմաշերտ խառնածինությունը, մշակութային ազդեցությունների խառնուրդը, որը Ռուշդիի տերմինաբանությամբ կոչվում է մշակույթի *չաթնիֆիկացում*: Բրիտանական գրող, Բուկերյան մրցանակի դափնեկիր, թագավորական միության անդամ՝ Ռուշդիի արվեստը դիտարկվող դիսկուրսի փայլուն օրինակ է: Ռուշդիի հանրաճանաչությունը հիմնվում է անգլերեն լեզվի նորարարական կիրառման և պատմության երևակայական ներկայացման վրա: Ռուշդին դիմում է *մոզակյան ռեալիզմի* կիրառմանը՝ նպատակ ունենալով հեռանալ եվրոկենտրոնությունից և ուշադրություն հրավիրել արևելյան մշակույթի վրա:

Ռուշդիի նորարարական մոտեցումը ամզլերենին թելադրված է հնդկական մշակույթի ոգին արտահայտելու ցանկությամբ, վերջինիս բազմակողմանիությամբ և բազմազանությամբ: Ռուշդին՝ որպես լեզվի նորարար, փորձում է խախտել *անգլերենի բնական ռիթմը* և բազմազանություն ներմուծում դրա մեջ (տես Топкачев 2016:253): Նրա բոլոր ստեղծագործությունները ներկայացնում են հնդկականության ներմուծման ռազմավարությունը և անգլերեն լեզվի ակտիվացումն ու ապագաղությանացումը:

Մշակութային ազդեցությունների սինթեզը կամ մշակույթի *չաթնիֆիկացման* ընթացքը նրա ստեղծագործության այցեքարտն է: Հեղինակը շրայլորեն ներմուծում է հինդի և ուրդու բարբառները, ինչպես նաև հնդկական ու եվրոպական

մշակութային իրակությունները, մուսուլմանական, քրիստոնեական և հրեական կրոնների ավանդույթները մաքուր բրիտանական անգլերենով՝ դրանով իսկ իր լեզվին տալով ինչ-որ համեմված բուրմունք, արևելյան կոլորիտ՝ եվրոպական ելևեջներով:

Մշակութային իրակությունների, նախատիպերի առասպելաբանության և կերպարների խառնուրդը բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսի շրջանակներում Ս. Ռուշդիի “մշակույթների երկխոսության” հիմքն է: Լուսաբանենք դրանցից միայն մի քանիսը.

*channay*— a popular dish in Indian and Pakistani cuisine made with potatoes as well as chickpeas; *bhajan*— any type of Hindu devotional song; *moidore* —an archaic term used to describe gold coins of Portuguese origin; *turban* — a type of men’s headwear based on cloth winding; *pushtun* — a race of warriors who live primarily in Afghanistan and Pakistan; *kutty* — a cute baby or child; *hijra* — a term used in South Asia, in particular, in India, to refer to transwomen (male-to-female transsexual or transgender individuals); *gao takia* — a long narrow pillow or cushion filled with cotton, down or fiber; *halva* — sweet confections, served across South Asia, Central Asia, West Asia, Jewish world, etc.; *chipkali* — lizard; *tamasha* — a show or theatrical entertainment of some kind; *chowkidar* — a watchman or gatekeeper; *nimbu-pani* — Indian lemonade; *cashew* — a kidney-shaped seed of the cashew tree; *gulabjamuns* — a kind of sweet; *angrez* or *feringee* — Englishman; *carrot halwa* or *gajar halwa*— a classic indian dessert; *chi-chi* — an expression of contempt; *phut-a-phut* — in no time; *barfi* — a sweet; *rummy* — a card game; *dhoban* — washerwoman; *baba* — grandfather; *garam masala* — hot spices; *rakshasas* or *hubshee* — demons; *baap-re-baap* — o, my father; *rasgullas* — a kind of sweet; *hai hai*— exclamatory expression; *yaar* — friend; *darshan* — the auspicious sight of a deity or a holy person; *pyar kiya to darna kya* — why to fear in love; *ooper nichey* — up and down; *Malabar masala* — spices; *sarpanch* — head of a village; *bhai-bhai* — brother-brother; *ayah* — nurse; *nimbu-pani* — lemon-juice; *khichri* — mixed food; *jalebis* — a variety of sweet (Фабрикант, Магун 2016):

Լեզվի խաչաձևումը՝ հինդի և ուրդու, պակիստանական և արաբական բարբառների, արտահայտությունների օգտագործմամբ, ապահովում է նրա վեպերում նկարագրված պատմական իրադարձությունների իսկությունն ու ճշմարտացիությունը, ինչպես նաև արևելքի և արևմուտքի լեզվական և ոճական խառնածինությունը:

Լեզվի խառնածինության մեջ Ռուշդիի վարպետությունը առավել լավ է երևում բառային մակարդակում, քանի որ հեղինակն օգտագործում է արաբական (*fi qadin azzaman, kam ma kam, ula wa inna shafa ata-hunna la-turtaja, tilk al-gharaniq al*) և լատինական (*feronia elephanticus, mucuna pruritis, sunt lacrimae rerum*) բառեր: Ժամանակ առ ժամանակ էլ, աշխատելով ոչնչացնել արքայական անգլերենի մաքրությունն ու տիպականությունը՝ նա ստեղծում է արդեն գոյություն ունեցող բառերի նոր ձևեր, օգտագործում է ոչ ճիշտ ուղղագրություն կամ ստեղծում է *հեղինակային խառնածին* բառեր՝ *jewinas, sonship, hobson-jobson service, memoryless, jewholic, doctori, dislikeable, unquestionable, hot-spice-laden air, straaange, unbeautiful, boffin-shaffin, historyless, dupatta-less* (Фабрикант, Магун 2016; *Часть ego сердца – в Ереване* 2016):

Հեղինակը հաճախ դիմում է բառերի և արտահայտությունների հորինմանը և, ցուցադրելով իր վարպետությունը՝ ստեղծում հիմնականում բարդ բառեր՝ *birtheaddeath, sugar-and nut chikki-toffee, overandover, blackasnight, updownup, downdowndown, suchandsuch, whatdoyoumeanhowcanyousaythat, godknowswhat noseholes, nearlynine, nearlynineyearold, almostseven* (Փабрикант, Мэгуи 2016; Часть его сердца – в Ереване 2016):

Իր ստեղծագործություններում Ռուշդին անգլերենի վրա կատարում է բազմաթիվ փորձեր՝ ենթարկելով այն իր տեսակի մեջ յուրատիպ փոփոխությունների: Այդ լեզվաբանական փորձերը Ռուշդինն թույլ են տալիս խաչաձևելու մի քանի մշակույթներ և լեզուներ՝ գրական անգլերենին հյուսելով իր իսկ կողմից ստեղծած խառնածին լեզուն:

### **Եզրակացություն**

Այսպիսով, հեղինակ-գաղթյալների ստեղծագործություններում դասդասվում են նրանց բազմամշակութային գիտակցության, խառնածին աշխարհընկալման, նոր հասարակության ձևավորման նախատիպերը, որոնք իրենց արտահայտությունն են գտնում բազմամշակութային գեղարվեստական դիսկուրս ստեղծողների յուրահատուկ լեզվական ոճում:

Տվյալ դիսկուրսի շրջանակներում արդիական է համարվում բազմամշակութային գրողի անհատական լեզվական պատկերի հետազոտությունը՝ որպես որոշակի հեղինակի լեզվաբանական, արտահայտչական, եղանակավորիչ և այլ բնութագրերի ամբողջություն:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև բազմամշակութային հեղինակի անհատական ոճի *համապարփակ* և *ազգամշակութային* առանձնահատկությունների, նրա հասկացութալորտի և հենքային հասկացությունների, մշակութային ինքնության լեզվաբանական յուրահատկությունների, մշակութանշույթավորված բառապաշարի խճանկարի, ազգամշակութային իրակությունների, այլաբանության, ակնարկի (այլուզիայի) բացահայտումը:

Միջգիտակարգային մոտեցման շրջանակներում բազմամշակութային գեղարվեստական դիսկուրսի վերլուծությունը՝ լեզվամշակութաբանության, ճանաչողական լեզվաբանության, հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության, գործաբանական լեզվաբանության, տեքստի ոճաբանության տեսանկյուններից, լուծում է լեզվաբանական կարևորագույն խնդիրներից մեկը:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Պոլիմպետս*՝ կտավ կտավի վրա: Այս տերմինը գրականագիտական օգտագործման մեջ է դրել Ռուշդին՝ այն փոխանցելով քննադատներին և իր վեպի մեկնաբաններին:



1. Chatterjee, K. (2004) *Chutnification: The Dynamics of Language in "Midnight's Children", Salman Rushdie's "Midnight's Children."* // A Reader's Companion. New Delhi: Asia Book Club.
2. *Discourse in Society*. Available at: <<http://www.discourses.org/>> [Accessed April 2016].
3. Rushdie, S. (1997) *The Moor's Last Sigh*. New York: Vintage International Edition.
4. Rushdie, S. (2006) *Midnight's Children*. New York: Penguin Books.
5. Малахов, В.С. (1997) *Парадоксы мультикультурализма*. // Иностранная литература, № 11.
6. Напцок, М.Р. *Дискурс В. Набокова: билингвизм и проблемы перевода*. Available at: <<file:///C:/Users/User/Downloads/diskurs-v-nabokova-bilingvizm-i-problemy-perevoda.pdf>> [Accessed April 2016]. June
7. Попова, М.К. (2001) *Проблема национальной идентичности и литература*//Вестник ВГУ. Серия 1, Гуманитарные науки. N 2.
8. Самарская, Т.Б.; Мартиросьян, Е.Г. (2012) *Художественный дискурс: специфика составляющих и особенности организации художественного текста*. Available at: <<http://journal.kfrgteu.ru/files/1/2012.10.20.pdf>> [Accessed May 2016].
9. Толкачев, С.П. *Современная английская кросскультурная литература в поле постколониальной теории*. Available at: <<file:///C:/Users/User/Downloads/sovremen-naya-angliyskaya-krosskulturnaya-literatura-v-pole-postkolonialnoy-teorii.pdf>> [Accessed April 2016].
10. Тюрина, С.Ю. *Дискурс как объект лингвистического исследования*. Available at: <[http://global.teka.ru/referat/doc\\_details/11027.html](http://global.teka.ru/referat/doc_details/11027.html)> [Accessed June 2016].
11. Фабрикант, М.С.; Марун В.С. *Гордость человека своей страной: индивидуальные и страновые детерминанты*. Available at: <<http://regconf.hse.ru>> [Accessed May 2016].
12. *Часть его сердца – в Ереване*. Available at: <<http://armenianhouse.org/saroyan/also-ru/kovcheg.html>> [Accessed May 2016].

### **The Question of Multicultural Artistic Discourse**

In the context of unprecedented migration and growth of inter-ethnic, inter-religion and interracial conflicts/clashes, linguists should focus urgently on issues around multiculturalism, particularly on multicultural literature. This article attempts to highlight the issues of multicultural consciousness, otherness, bicultural worldview, hybrid cultural identity, formation of a new mentality, multiculturalism reflected in multicultural artistic discourse and emphasize the importance of the linguistic investigation of these issues. The author of the article tries to define the phenomenon of *multicultural artistic discourse* and draws the attention of linguists to the importance of the linguistic study of this discourse and its parameters using different approaches (such as cognitive, linguocultural, etc.).

### **К вопросу об особенностях мультикультурного художественного дискурса**

В условиях стремительного потока миграции все более актуальными становятся вопросы и проблемы особого пласта гибридной культуры — мультикультуры, в частности мультикультурной литературы.

Современная лингвистическая наука испытывает дефицит в исследованиях, в которых проблемы поликультурного сознания, гибридного мировидения, становления новой ментальности, находящих свое выражение в своеобразном языковом стиле создателей мультикультурного художественного дискурса рассматривались бы комплексно, с учетом широкого лингвокультурологического контекста и междисциплинарного подхода.

В статье делается попытка определить феномен “мультикультурный художественный дискурс” и привлечь внимание лингвистов к изучению данного дискурса и его параметров с использованием различных подходов (таких как лингвоцентрический, текстоцентрический, антропоцентрический, когнитивный и др.).